ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-7

ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-25/2 ծածկագրով գնումների էլեկտրոնային (e-Auction) համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար ամպային ծառայությունների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղարի 07.05.2025թ. N 141/1-Ա հրամանով ձևավորված գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 14.07.2025թ. ժամը 10-00-ին, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի վարչական շենքում, ք.Երևան, Մ.Խորենացու-3,7 հասցեում:

Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Ս.Պատուրյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Ա.Ավետիսյանը, Գ.Գալստյանը և քարտուղար Գ.Ղազարյանը:

<u>Հայտերի գնահատման արդյունքները հաստատելու մասին</u>

-Գնահատող հանձնաժողովի նախագահ Ս.Պատուրյանը տեղեկացրեց, որ գնահատող հանձնաժողովը կասեցրել էր հանձնաժողովի նիստը՝ «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության նպատակով: Ուսումնասիրության արդյունքում գնահատող հանձնաժողովը արձանագրեց, որ «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ-ի կողմից ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պայմաններին:

Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

1. «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ-ին ճանաչել հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտ ներկայացրած մասնակից:
2. Հաշվի առնելով, որ «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ-ի կողմից հայտով ներկայացրած գինը չի գերազանցում ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից պլանավորված ընդհանուր գինը՝

-«ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ-ին ճանաչել ընտրված մասնակից:

3. ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-25/2 ծածկագրով (e-Auction) համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ հայտարարել անգործության ժամկետ, հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Անգործության ժամկետի ավարտից հետո ներկայացնել առաջարկ ընտրված մասնակից «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ-ին պայմանագիր կնքելու համար՝ պահանջելով «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ-ից ներկայացնելու որակավորման և պայմանագրի ապահովումները:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Ս.Պատուրյան

Անդամներ՝ Ա.Ավետիսյան

Գ.Գալստյան

Քարտուղար՝ Գ.Ղազարյան